

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԵՏԱԲԵՐ

Գ. ՏԱՐԻ

ՀԱՆԷՊ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 2 1930

թիի 21

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿԸ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՔՐԻՍՏՈՍԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀՈԴԻՆ

ԹՐԳ. Բ. ԺԱՄԿՈԶԱՆՆ

Ր. ԹԱԿՈՐ

Բ. Մ. ԵՂԻԱԵԱՆ

ՄԻԱՅՆ ՅԻՍՈՒՍ

ՎԵՐ. Ա. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ԱՅՑ ՄԸ Ի ՂԱԶԻՐ

Ե. Լ. ԱՂԷԿԵԱՆ

ԸՆԹԵՐՑՈՂԻ ՍԻՆԱԿ

ԿԵԱՆՔԻ ՇՈՂԵՐ

ԼՈՒՐԵՈՒ ԲԱԺԻՆ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷԶԸ

NOR AVEDAPER
BOITE POSTALE 287, ALEP, SYRIE

ՏՊԱՐԱՆ ԳՈՒԼԷ ՀԱՆԷՊ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷԶԸ

ԾՆՈՒՆԴԻ ԵՐԳԸ

Ազատ քաղաքականության Տիֆլիսի
գրողականի

ԳԼՈՒԽ Գ.

Իրաւ, թէ անգամ մը կրակարանին երկաթներուն զարնուեցաւ, աթոռին վրան գլորեցաւ, դաշնակին վրան կոխեց, վարագոյրին փաթտուեցաւ, սակայն աղջիկը ուր որ գնաց, անոր հետեւեցաւ, կարծես թէ ուրիշը բռնելու միտք չունէր, և ինչ ալ ըլլար՝ զայն բռնել կ'ուզէր։ Շատ անգամ աղջիկը կը գոչէր թէ ըրածը չիտակ չէր, և իրաւ ալ չիտակ չէր կարծեմ։ Սակայն վերջապէս անոր շրջապահստին շնչիւնէն զայն կրցաւ բռնել անկիւնի մը մէջ, այս անգամ ո՛վ բռնած ըլլալը գիտնալու համար — իբր թէ չէր գիտէր — նախ անոր գլխարկը շօշափեց, յետոյ անոր մասնաւոր մէկ մատանին քիչ մը սեղմեց, և ապա վիզը կախուած շղթան գտաւ։ Ինչ տարօրինակ ընթացք էր այդ։ Անշուշտ աղջիկը տղուն ըրածին մասին իր գաղափարը խօսեցաւ անոր՝ երբ ուրիշի մը աչքը կապուած էր, ու իրենք երկուքը միասին վարագոյրին ետեւ պահուըտած՝ մը-

տերմօրէն խօսակցելու առիթը գտնուէին։

Այնուհետեւ ուրիշ խաղեր ալ խաղացին։ Սքրուճի քեռորդւոյն այն քոյրը, որ աչք կապուկի խաղին առնէ բաւական յոգնեւէր, այժմ թիկնաթսոյի մը վրայ հանգիստ նստած՝ կը մասնակցէր միւս խաղերուն, մինչդեռ Ոգին և Սքրուճ ճիշդ անոր ետեւը կանգնած կը դիտէին։ Խաղողները քսան հոգի էին, և հարց ու պատասխանի խաղը ցոյց կուտար թէ այն աղջիկը բոլոր միւսներէն աւելի սրամիտ էր։ Ասիկա չի նշանակեր թէ միւսներն ևս սրամիտ չէին։ Խաղի միջոցին երբեմն Սքրուճ այնքան կը հետաքրքրուէր՝ որ ինք ևս կը պատասխանէր եղած հարցումներուն։ Բարեբաղդաբար հոն եղողները ոչ զինքը կը տեսնէին, ոչ ալ իր ձայնը կը լսէին։ Իսկ Ոգին Սքրուճը այս վիճակին մէջ տեսնելով կ'ուրախանար. ու այնքան գոռովալի կը նայէր անոր՝ որ Սքրուճ համարձակութիւն ունեցաւ խնդրել անկէ՝ որ հոն կենան մինչև որ հիւրերը մեկնին։ Սակայն Ոգին թոյլ չը տուաւ։

«Ահա նոր խաղի մը սկսան», ըսաւ Սքրուճ, «կէս ժամ, կ'աղաչեմ, միայն կէս ժամ ալ կենանք։»

(Շար.) 26

(Շարունակութիւն ինքնագրականին)
և Աշխատաւորական Կուսակցութեան պետը, այս գրքին գրած իր յառաջաբանին մէջ կ'ըսէ. «Մենք կրնանք ազատ եղեղեցիները նկատել մէկը այն ջինջ աղբիւրներէն որոնք ծնունդ տուին ազատ ժողովրդապետութեան։ Հուայթֆիլտի կատարած գործը ոչ միայն մարդերը զինեց աշխարհի հարստութեան մէջ բաժին ունենալու պահանջներով, այլ նաև անոնց տուաւ յարգանք իրենց անձին հանդէպ։ Տակաւին անլոյծ կը

մնայսա հարցը թէ ինչպէ՞ս պէտք է մարդը իր իսկ տէրը շինել։»

Ահա պետական մարդու մը գաղափարը ԺԸ. դարու աւետարանական արթնութեան մասին Անգլիոյ մէջ։ Վերջացնելով կ'ըսենք. ունէ հասարակութիւն կրնայ առողջ, վտանգէ ազատ, աճուն և բարձր կեանք մը ունենալ անոր ամէն մարդին մէջ, եթէ հոգեւոր արժէքներու պէտք եղած տեղն ու կարեւորութիւնը կուտայ։ Ահա այս է ինչ որ աւետարանականութիւնը կը յանդգնի ընել։

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Գ. ՏԱՐԻ

ՀԱՆՔԻՊ, ԴԵԿՏԵՄԲԵՐ, 2 190

ԹԻԻ 21

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԲՆՈՐՈՇԻՉ ԳԻԾԸ

2.

ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՒ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

Մեր նախորդ յօդուածներով ըսինք թէ աւետարանական շարժումը ծագում առած է ո՛չ ազգայնական նպատակներով, ո՛չ լոկ աւելի ազատ և ռամկավարական ընկերային իրաւակարգ մը յառաջ բերելու, ո՛չ՝ միայն աւելի զարգացեալ դպրոցներ ունենալու և ո՛չ ալ արդիական լեզու և դրականութիւն մը ըստեղծելու ձգտումով: Եւ սակայն ասոնցմէ ոչ մէկը կ'արհամարհէ և ոչ մէկուն կը հակառակի. ընդհակառակը զանոնք մեծապէս կը գնահատէ իրենց ունեցած իրական և տեւական ներքին արժէքներուն համար:

Աւետարանականութիւնը կ'ընդունի թէ այս յիշեալ բոլոր արժէքներէն բարձր արժէք մ'ալ կայ, որ պէտք է առաջնորդող և իշխող տարրը ըլլայ ունեւատական և հասարակական կեանքի մը մէջ. — այս է հոգեւոր արժէքը: Ունեւատին կամ ժողովուրդին կեանքին չափանիշը կը ցուցնեն՝ ոչ միայն ազգայնական, հասարակական, կրթական, զբոսական մարդերուն մէջ իր կատարած նշանաճումները, այլ ասոնց հետ մէկտեղ և ասոնցմէ աւելի հոգեւոր մարդին մէջ ունեցած իր գարգացումը և շահած յաղթանակները: Եւ հիմէ երբեք ժԹ. դարու ազգային — հասարակական, կրթական և զբոսական շարժումներուն մէջ աւետարա-

նականութիւնը իր օգտակար բաժինը ունեցած է — և կը խորհինք թէ բաւական մեծ եղած է ան — ասիկա պէտք է վերադրել աւետարանական շարժումին ընդունած սա ուղղութեան՝ թէ ասոնք նպատակէ աւելի իբր միջոց գործածուած են, հետեւաբար ասոնք միշտ եղած են երկրորդական և երրորդական նպատակներ: Ասոնք այնքան արժէք ունին որչափ որ կը նպաստեն հոգեւոր նպատակին իրազորման, և արժէք մը չեն ներկայացներ երբ կը խաթարին և կ'սպաննեն հոգեւոր կեանքը:

Ազգայնականութիւնը կը գնահատենք երբ ան կ'օգնէ ինքնուրոյն, ինքնատիպ հոգեւոր կեանքի մը ստեղծումին: Հոգեւոր կեանքը պէտք է ունէ հասարակութեան բնախօսական, հոգեբանական, ցեղային և աշխարհագրական պայմաններուն յարմարի, որպէսզի ըլլայ հաստատուն եւ տեւական: Թարգմանածոյ եւ թիթեօրէն ընդօրինակեալ ունէ շարժում և գաղափար կը նմանին ժայռին վրայ ցանուած սերմին:

Կը գնահատենք ժողովուրդապետական իրաւակարգը որպէս զի հոգեւոր կեանքը զարգանայ առողջ եւ ազատ, աւելի բարձր եւ ընդարձակ չափով օգտակար ըլլալու համար, ազատ աշխարհական կամ կղերական տիւէ դա-

սակարգի կամայական կաշկանդումներէն:

Կը գնահատենք կրթական եւ մտաւորական շարժումը երբ ան կը սատարէ ողջամիտ եւ հաւասարակշռեալ հոգեւոր կեանքի մը զարգացումին:

Կը գնահատենք ոեւէ գրականութիւն մը որ կ'ազնուացնէ հոգին, ջամբելով անոր շինիչ առողջարար սնունդ մը, հաղորդակցութեան իբր միջոց գործածելով անոր հասկնալի լեզու մը:

Ահա այս է աւետարանականութեան գլխաւոր նպատակակէտը, որ կը կազմէ իր բնորոշիչ գիծը, եւ որով այն կը տարբերի միւս բոլոր շարժումներէն, որոնց հետ սակայն՝ սերտօրէն յարաբերակից կը գտնուի նպաստաւորութիւնով եւ ազդեցելով անոնց պայմաններէն:

Աւետարանականութիւնը չի գոհանար այս ազգային-հասարակական, կրթական եւ գրական մարզերը միայն՝ օգտագործելով, այլ կ'աշխատի նաեւ գանոնք փոխել, անոնց ներշնչելով սուրբ վսեմութիւն մը: Ազգայնականութիւն մը որ այլամիտ, այլատեսաց ձեւ մը կ'առնէ՝ զուրկ մարդկայնական տեսիլքէն՝ յառաջ կը բերէ լճացում եւ մահացում: Ժողովուրդապետական իրաւակարգ մը որ զուրկ է մեծահոգի, ազնիւ նկարագրին առաջնորդութենէն կը յանգի կամ անիշխանութեան կամ բռնակալութեան: Կրթութիւն մը որ կ'անտեսէ հոգիին սընունցումը վերջապէս պատճառ կը դառնայ բոլոր անձնաւորութեան տկարացումին եւ կորուստին: Գրականութիւն մը որ գոհացում չի տար հոգիի սուրբ փափաքներուն, կը պղծէ զայն, կ'աւրէ անոր ազնիւ զիմպիծը եւ հուսկ ուրեմն կը մատնէ զայն անտալարակ մահուան:

Աւետարանականութիւնը կուզայ իր հոգեւոր նպատակով եւ ուղղութեամբ անհատը կամ հասարակութիւնը օժտել համամարդկային վեհ տեսիլքի ընդարձակ հորիզոնով, ամէն մարդկային անձ-

նաւորութեան եւ կամ տնհատական ազատութեան հանդէպ օրալիւր յարգանքի զգացումով:

Բրիտանական մեծ թերթի մը մէջ հըրատարակուած, «Անգլիան 1830—1930 ին» խորագրով յօդուած մը շատ լաւ կը բացատրէ այն ազատարար եւ շինիչ դերը զոր ժԸ. դարու աւետարանական վերաթնութիւնը կատարեց այս մարդին մէջ: Ան կ'ըսէ. «ԺԸ. դարու աւետարանական (մեթոտական) արթնութիւնը ամէնէն ողջադատ պատմաբաններու կարծիքին համեմատ Մեծն Բրիտանիան ազատեց արիւնալից յեղափոխութենէ մը, որ պիտի նշանակէր «կարմիր կործանում» եւ օրէնքի ոտնակոխում: ... Մեթոտականութիւնը աշխատաւոր ժողովուրդին թարգմանը եւ առաջնորդը եղաւ: ... Եթէ Բրիտանական Աշխատաւորական շարժումը այսօր իր կրօնական թօնով Եւրոպական շատ մը բանւորական շարժումներուն միշտ գարմացում կը պատճառէ եւ եթէ իբր ամէնէն վստահելի առաջնորդները Ազատ (այսինքն ոչ-Անկլիկան) եկեղեցիներէն օտացած է, պատճառը նախ՝ Աւետարանական արթնութիւնն է, եւ երկրորդ՝ «ազգատներու եւ կարօտներու» կողմանէ քոտնուած սագիւտը՝ թէ ազգատները եւ կարօտներն ալ ունին հոգիներ եւ «հարուստներու եւ ազնուականներու» չափ իրենք զիրենք ազատօրէն վարելու եւ գործածելու իրաւունքը»:

Rev. Albert D. Belden «Ճորճ Հուայթֆիլտ' Արթնցնող» անուն իր գրքին մէջ կը պաշտպանէ սա թեզը՝ թէ «Հուայթֆիլտի եւ Ուէսլիի յառաջ բերած արթնութիւնը ոչ միայն այդ դարուն նոր ծագող ռամկավարութիւնը փրկեց, այլ նաեւ ներկայ եկեղեցին կը հրաւիրէ դարձեալ ռամկավարութեան առաջնորդը եւ փրկարարը ըլլալու»: Մը. Րէմզի Մէքստանըլտ, Անգլիոյ ներկայ վարչապետը (Շար. Մանուկներու եջին սակն է)

ՔՐԻՍՏՈՍԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀՈԳԻՆ

6. ՈՒՍՏԻ ՃՇՄԱՐԻՑ ԿԵԱՆՔԸ ԱՊՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԷՏՔ Է ՄԱՐՄՆԵՂԷՆ
ԿԵԱՆՔԸ ԹՈՂՈՒԼ ԵՒ ՀՈԳԻՈՎ ԱՊՐԻԼ

Հոգեկան կեանքին համար տարբերութիւն չկրնար ըլլալ ընտանիքի անդամներուն և օտարներուն միջեւ: Ինչպէս Յիսուս յայտնեց թէ՛ իր մայրն ու եղբայրները իր վրայ բարձր իրաւունք մը չունին: Անոնք որ իր Հօրը կամքը կը կատարեն, միայն անոնք են իր մայրն ու եղբայրները: Մարդու մը կեանքը ու բարօրութիւնը ոչ թէ ընտանիքէն կախում ունի, այլ հոգիին կեանքէն:

Ատոր համար Յիսուս ըսաւ. «Երանի անոնց որ Հօրը մասին իրենց ունեցած ըմբռնումը կը պահեն: Հոգիով ապրող մարդը տուն չունի, քանի որ հոգին իրեն մասնաւոր տուն չկրնար ունենալ»: Ու յայտնեց թէ ինք ալ մասնաւոր բնակարան մը չունի և թէ Հօրը կամքը կատարելու համար ժամանակի և տեղի տարբերութիւն չկայ և պէտք չէ գնել:

Հօրը կամքը կատարողը մարմնաւոր մահէն չվախնար, քանզի Ֆիլիքական մահուան պիտի յաջորդէ հոգեկան կեանքը, ուստի հոգեկան կեանքին հաւատացող մը ոչ մէկ բանէ վախնալու է:

Ոչ մէկ հոգ կրնայ անկարելի դարձնել հոգիին մէջ ապրիլը: Եթէ մէկը մտադրէ անմիջապէս հնազանդիլ Քրիստոսի վարդապետութեան պէտքէ թողու իր հայրը, քանզի Յիսուս կ'ըսէ. «Միայն մեռելը կրնայ մեռեալին յուղարկաւորութեան վրայ մտածել. բայց կենդանի եղողը Հօրը կամքը կատարելով կ'ապրի»: Ընտանիքին և ազգականներու մասին տածուած հոգերը պէտք չէ արգելք ըլլան հոգեկան կեանքին: Ան որ Հօրը կամքը կատարելէն աւելի իր Ֆիլիքական կեանքի պտուղներուն վրայ կը մը-

տածէ, կը նմանի այն երկրպագործին որ հերկելու ատեն ետեւ կը նայի, փոխանակ առջև դիտելու:

Ֆիլիքական կեանքի հաճոյքներուն համար անհրաժեշտ երեւցող հոգերը խաբկանք են: Կեանքին միակ ճշմարիտ գործը, Հօրը կամքին գաշտը մշակելն է, անոր ուշադրութիւն ընելն է, մէկ խօսքով զայն կատարելն է: Եթէ Մարթա գանգատեցաւ, թէ կերակուրի պատրաստութեան համար ինք մինակ կը յոգնի, թէ իր քոյրը Մարիամ չօգնէր իրին, այլ նստած վարդապետին կ'օգնէ, Յիսուս ըսաւ. «Անարգարօքն զայն կը մեղադրես: Եթէ անհրաժեշտ կընկատես՝ անձնապէս կրնաս նեղուիլ, բայց թո՛ղ զանոնք, որ Ֆիլիքական հաճոյքներուն պէտքը չզգալով կեանքի միակ էական գործին ուշադրութիւն կ'ընեն»:

Յիսուս ըսաւ. «Ով որ ճշմարիտ կեանքին կը բաղձայ պէտք է որ իր անձնական փափաքները մէկ կողմ նետէ»: Անձնական փափաքները կեանքի ծրագրէն նետելէ վերջ, ահէն վայրկեան պատրաստ գտնուելու է հալածանք ու նեղութիւն կրելու համար: Մէկը, որ իր Ֆիլիքական կեանքի բաղձանքներուն կ'ուզէ հասնիլ, պիտի կորսնցնէ Հօրը կամքին կատարումով ձեռք բերուելիք իրական կեանքը:

Շահելու սէրը, հարստանալու բաղձանքը ամենամեծ արգելքներն են հոգեկան կեանքի հասնելուն: Մարդիկ կը մոռնան թէ ոեւէ վայրկեան կրնան մեռնիլ և թէ իրենց ստացուածքն ու հարստութիւնը ոչ մէկ արգելք կրնան ըլլալ անոր և ոչ մէկ անհրաժեշտութիւն

կը ներկայացնեն ապրելու, կեանք ունենալու համար: Մահը ամենուն վրայ հաւասարապէս կը սաւառնի: Հիւանդութիւն, սպաննութիւն, մահացու արկած կրնան ունէ վայրկեան վերջացնել կեանքը: Ֆիզիքական մահը՝ մեր կեանքի ունէ մէկ վայրկեանին անխուսափելի է: Մինչ մարդ կ'ապրի, պէտք է ենթադրէ, թէ՛ մահը կը յապաղի ու այդ յապաղումը շնորհ մ'է բարեւիրտ կարողութենէ մը բղխած: Թէև երկրի երկնքի բոլոր պատահարները կը ճանշնանք, բայց զգուշութեամբ զանոնք դիմագրաւելու համար կը նախապատրաստուինք, բայց մահը, որ գիտենք թէ ամէն վայրկեան մեր վրայ կ'սպառնայ կը մոռնանք: Եթէ շմոռնայինք չէինք կրնար մարմնական կեանքին անձնատուր ըլլալ և անոր վրայ հաստատուիլ: Քրիստոսի վարդապետութեան հետեւելու համար պէտք է հաշուել ֆիզիքական կեանքի ծառայութեան, անձնական կամքի ծառայութեան և Հօր կամքի կատարումին տարբերութիւնը և վերջինին առաւելութիւնները: Ովորկըցած է յստակօրէն հաշուել զայն, կրնայ Յիսուսի աշակերտները ըլլալ: Ով որ հաշուածու ճշգրտած է չկրնար երեւակայական շահն ու կեանքը իրական շահէն ու կեանքէն նախընտրել: Ճշմարիտ կեանքին հրաւիրուած ենք, ինչպէս հարուստ մը իր հիւրերը խնջոյքի կը հրաւիրէ: Հայրը, հարուստին նման, բոլոր մարդիկ իրեն կը հրաւիրէ, սակայն հրաւիրեալներէն ոմանք վաճառական, ոմանք տնական, ուրիշներ ընտանիքին գործերով զբաղած հրաւէրը չեն ընդունիր: Միայն աղքատները, որոնք մարմնական հոգի չունին, կուգան խնջոյքին, երջանկութիւն կը շահին:

Շատ անգամ մարդիկ ֆիզիքական կեանքի հոգիով այնքան մտազբաղ են, որ կը կորսնցնեն ճշմարիտ կեանքը: Ան որ չկրնար ֆիզիքական կեանքի հո-

գերն ու շահերը մէկդի ձգել, չկրնար հօրը կամքը կատարել, քանզի կարելի չէ քիչ մը ֆիզիքին և քիչ մը Հօրը ծառայել:

Պէտք է հաշուել թէ մարմինն ծառայելը լա՞ն է, թէ կարելի՞ է անձնական կամքին մէջ ատով ճշմարիտ կեանքին հասնիլ: Տուն շինողի մը կամ պատերազմի պատրաստողի մը պէս պէտք է ընել: Պէտք է հաշուել թէ շինութիւնը լրացնելու կամ յաղթանակը շահելու միջոցները ունի՞: Եթէ տեսնուի թէ կասկածելի է ո՛չ բանակ և ո՛չ աշխատանք սպառելու է: Այլապէս ապարդիւն գոհողութեան փոխան ծաղրանքի առարկայ կը դառնայ: Եթէ կարելի ըլլար ֆիզիքական կեանքը անձնական կամքին յարմարցնել, այն ատեն կարելի պիտի ըլլար կեանքը լաւապէս ապրիլ: Քանի որ ասիկա անկարելի է, ուստի լաւ է մարմինը գոհել և հոգիին ծառայել: Այլապէս ոչ մէկը և ոչ միւսը պիտի շահի: Ֆիզիքական կեանքը չպիտի շահուի, իսկ հոգեկանը պիտի կորսուի: Ուստի Հօրը կամքը կատարելու համար, ֆիզիքական կեանքը ամբողջութեամբ արհամարհուելու է:

Ֆիզիքական կեանքը չընկալուած է աշխարհի խարդախ կամ սուտ հարուստութիւնով, որը պարտաւոր ենք իմաստութեամբ գործածել, որպէսզի կարենանք ճշմարիտ և կատարեալ հարստութիւնը շահիլ:

Իր տիրոջը կամքին գիտակից ծառան անգամ լաւ է, որ տնտես եղած ատեն՝ ուրիշ մարդոց հետ լաւ կը վարուի, քանի որ հակառակ իր հաւատարմութեան կըրնայ առանց վճարումի արձակուել, այն ատեն անոնք որ իրմէ բարիք ընդունած են, զինք պիտի ընդունին ու պաշտպանեն: Մարդ ճիշդ այսպէս գործելու է: Ֆիզիքական կեանքը այն հարստութիւնն է՝ որ ունէ մէկուն չի պատկանիր, այլ այս կամ այն անձին տրուած է Յա-

մանակաւորապէս: Եթէ մարդիկ ճշտօրէն գործածել զիտեան զայն որ իրենց չպատկանիր, այն ատեն պիտի վաստակին ճշմարիտ հարստութիւնը, իբր իրենց սեփականութիւնը: Առանց անցաւոր հարստութեան լքումին չենք կրնար ճշմարիտին տիրանալ: Կարելի չէ մարմնի խաբեպատիր և հոգիի իրական կեանքին հաւասարապէս ծառայել: Մարդ չը կրնար թէ ստացուածքին և թէ Աստուծոյ ծառայել: Ինչ որ մարդոց քով պատուաւոր է Աստուծոյ քով խոտելի է: Հայրսանալը Աստուծոյ առջև մեղք է: Հարուստ մարդ մը միշտ մեղապարտ է, քանի որ առատօրէն և ճոխ կ'ապրի, մինչ իր զրան առջև աղքատները սովամահ կ'ըլլան: Ամէն ոք գիտէ, թէ այն ստացուածքը որ մէկը ուրիշներուն հետ չբաժնէր, Հօրը կամքին հակառակ կը պիղուի, կը պահուի:

Օր մը Յիսուս հանդիպեցաւ աստուածավախ օրինականի մը, որ սկսաւ պարծիլ օրէնքին խոշոր կանոնները պահած ըլլալուն համար: Յիսուս յիշեցուց թէ՝ միայն մէկ պատուէր կայ և ան է «Սիրել ուրիշը անձիդ պէս» և ասիկա է Հօրը կամքը: Օրինականը աւելցուց. «Այդ ալ պահած եմ»: Յիսուս դարձաւ և ըսաւ. «Ճշմարիտ չէ. եթէ դուն Հօրը կամքը կատարէիր ստացուածք չէիր ունենար: Ամէն ով որ իր սեփական ստացուածքը ուրիշներուն չտար, Հօրը կամքը կատարած չըլլար»:

Ու դառնալով աշակերտներուն՝ շարունակեց. «Մարդիկ կը կարծեն թէ առանց ինչքի ապրիլը անկարելի է, բայց ես կ'ըսեմ. ճշմարիտ կեանքը անձնական ստացուածքը ուրիշներուն տալուն մէջ կը կայանայ»:

Չաքէոս անունով մարդ մը՝ Յիսուսի վարդապետութիւնը լսելով՝ հաւատաց և իր տունը հրաւիրեց, ուր ըսաւ. «Աստացուածքիս կէսը աղքատներուն պիտի տամ և բոլոր անոնց, որ անիրաւութիւն

ըրած եմ քառապատիկը պիտի հատուցանեմ»: Յիսուս ըսաւ. «Ահա մարդ մը, որ իր Հօրը կամքը կը կատարէ: Հօրը կամքը կատարելու համար առիթի սպասելու չէ, այլ ամբողջ կեանքը անով անցնելու է»:

Բարութիւնը ոեւէ ձեով չչափուիր: Կարելի չէ ըսել ո՞վ աւելի և ո՞վ պակաս բարիք ըրած է: Այլի մը, որ իր վերջին լուծման կուտայ, աւելի տուած կ'ըլլայ քան հարուստը, որ հոգարներ կուտայ: Նոյնպէս բարիքը կարելի չէ չափել անհրաժեշտ կամ անպէտ ըլլալով: Կին մը կարեկցեցաւ Յիսուսի և ոսկիներ արժող թանկագին իւզը թափեց Յիսուսի վրայ: Յուզայ մտածեմ թէ կինը սխալ ըրաւ, քանի որ անով կարելի էր աղքատներ կշտացնել, բայց Յուզայ գող մ'էր, ան սուտ կը խօսէր: աշխարհիկ գնոյն վրայ խօսելու ատեն աղքատները ի մտի չունէր: Բարիք գործելու ատեն ո՛չ պէտքը և ո՛չ արժէքը կրնան հարց ըլլալ, այլ միշտ, ամէն վայրկեան ուրիշները սիրելը և իր ունեցածը անոնց տալն է հաւկաւորը:

Պէյրուք

ԹՐԳՄ. Բ. ԺԱՄԿՈՉԵԱՆ

ԲԱՊԻՆՏՐԱՆԱԹՆԻ ԹԱԿՈՐ

ԺԸՆԵԻԻ ՄԷՋ

Գ.

Բապինտրանաթն Թակորի լուսաւորումը բոլորովին տարբեր պարագաներուն ներքեւ տեղի ունեցած է: Թակոր ոովորութիւն ունէր ամէն առաւօտ կանոնաւ ելլելու եւ արեւին ծագումը դիտելու: Շատ երիտասարդ էր, երբ օր մը կը դիտէր առաւօտուն հրաշալի յառաջացումը, որ բլուրներու կատարները բռնկեցուցած էր արեւու լոյսովը, բլուրին կողմ ի վեր գալարուող կածանի մը վրայ տեսաւ խումբ մը աշխատաւորներ որոնք սւրախ գուարթ աշխատանքի կ'երթային՝ կայտառութեամբ

ու թարմութեամբ զեզուեն: Դառնալով միւս կողմ՝ տեսաւ մայր կողմ մը որ իր նորածինը լեզուովը կը մաքրէր՝ ու կը գգուէր: Եւ բնական՝ կենդանական ու մարդկային աշխատաւորական կեանքի այս պարզ տեսարաններու միաւորումը այնքան ներկաշնակ գեղեցկութիւն մը պատկերացունցին խոր առջեւ, որ խորունկ երջանկութեան մը տիրացաւ՝ խորհելով եւ զգալով թէ ինքն ալ մաս կը կազմէր բնութեան այդ մեծութենէն: Այսուհետեւ ան սկսաւ սիրել ժողովուրդներու հասարակ դասակարգը, զոր՝ ըստ Հնդկաստանի դասակարգային դրութեան՝ սորված էր առել: Խոնարհ կեանքը մեծութիւնով լի էր այլեւս: Սիրեց նաեւ կենդանական աշխարհը: Ասոնց մէջ տեսաւ պարզութեան մէջ ծրարուած մեծ ճշմարտութիւններ:

Իր եղբայրը՝ լսելով թափորի այս այլափոխութիւնը՝ ըսաւ իրեն. «Հապա եթէ ելլես Հիմալայական բարձրութիւնները՝ ինչքան աւելի մեծ պիտի ըլլար լուսաւորումը՝ դիտելով բնութեան այդ տիրտան մարմնացումը որ իր հսկայ, սպիտակ գլուխը վեհ խիզախութեամբ մը դէպի երկինք կը բարձրացնէ:» Թափոր՝ անսալով իր եղբորը խորհուրդին՝ գնաց Հիմալայաներուն մօտ. բայց փոխանակ աւելնալու՝ կորսուեցաւ իր լուսաւորումը: Այդ դէպքին սապէս անդրադարձած է թափոր. «Այդ փորձառութենէս սա մեծ դասը առած եմ, որ եթէ դո՛ւն երթաս գուրս զԱստուած փնտռելու՝ պիտի կորսնցունես զԱյն. սակայն եթէ ինքզինքդ տրամադրես իրեն եւ ձգես որ Ան քեզ գտնէ իր յատուկ ճամբաներովը, այն ատեն դուն ալ պիտի գտնես զինքը:»

Թափոր վերագործաւ ժողովուրդներու պարզ կեանքին, եւ վերստացաւ իր լոյսն ու խաղաղութիւնը: Ինքզինքը նուիրեց համեստ դասակարգի երջանկութեան, եւ գտաւ իր ալ երջանկու-

թեան համար անսպառ աղ մը հոն: Ինչաւ իր ազնուականութենէն, խառնուեցաւ աշունց կեանքին՝ ապրելով ճիշդ անոնց պէս, զիւղէ. զիւղ չըջեցաւ ու ժողովուրդական երգեր յորինեց անոնց համար, եւ գտաւ որ կեանքն եւ Աստուածութիւնը ժողովուրդներու այս խոնարհ դասակարգին մէջն էր: Իր այս մեծ հաւատքը սա տողերով յայտնած է վերջէն.

«Հո՛ւս է Բու գահդ ո՛վ Տէր,
Ուր կը կանգնին թշուառներն,
Եւ հո՛ւս՝ հետքերն քայլերուդ
Ուր կը քայլեն բեռնակալներն:
Երբ ձգեցի պատմուճանս
Փռչիին մէջ՝ տեսա՛յ փառքդ:»

Բանաստեղծին մեծ ոգին իր ընդարձակ ասպարէզը գտաւ ժողովուրդներու կեանքին մէջ: Երգեց ու երազեց մեծութիւնը, եւ իր հոգւոյն մէջ ապրեցաւ պարզութեան եւ խոնարհութեան սէրը: Բայց երբեք չկորսնցուց իր շփումը բնութեան մեծ սրտին հետ: Յաճախ ամիսներով կ'աւանձնանար Գանգէս գետին հեռաւոր ափերը, հետը տանելով անդկղէնի իր համեստ պաշարը: Իր նաւակը կը կապէր գետին եզերքը եւ կը խառնուէր անտառներու կեանքին: Երբեմն 5-6 ամիսներու երկարատեւ աւանձնացումէն՝ իր լեզուն կը կորսնցունէր բառեր. արտասանելու ճկունութիւնը, եւ կը ստիպուէր վերստին սորվիլ բառեր հնչելը:

Կեանքի մէջ շատ դառն փորձառութիւններ ունեցած է թափոր: Իր կինը՝ զոր շատ սիրած էր՝ մեռած է կանուխէն, թողլով ետեւը աղջիկ մը եւ մանչ մը: Աղջիկը հիւժախտէ բռնուած ու մեռած է շուտ: Ատեն մը հետը ունեցած է մանչ դաւակը, որ կանուխէն ցուցուցած է բանաստեղծի մը ոգին, բայց ան ալ հընտախտի (զօլէրա) բռնուելով խլուած է իրմէ: Եւ հէք բանաստեղծը՝ այլեւս մի-

այնակ մնալու դատապարտուած՝ ամբողջ գիշեր մը կը դիտէ իր որդւոյն հոգեվարքը, զայն դրած էր ծունկերուն վրայ: Թաղոր ըսած է Andrewsին. «Այս գիշեր՝ որդիս բազուկներուս մէջ առած, հրեակամայ զայն կը տանէի դէպի անդրաշխարհը՝ ըմբռնեցի կեանքի ու մահուան խորհուրդը: Տեսայ որ մահը կեանքի վերջաւորութիւնը չէր, այլ անոր լրումը՝ կատարելագործումը:»

Դրուագ մը հաս: Տարիներ առաջ, Ճաբոն այցելութեան միջոցին, գիւղի մը մօտակայ բլուրին վրայ բնիկները իրենց ցուցուցին վայր մը ուր դիւցազնական մեծ դէպք մը տեղի ունեցած էր: «Եթէ,» ըսին անոնք, «այդ դէպքի մասին մեզի յանգ մը տաս քու ներշնչումներէդ՝ զայն պիտի փորագրենք հանդիպակաց ժայռին վրայ՝ իբրեւ անջինջ պատգամը այդ հերոսամարտին:» Թաղոր հարցուց թէ ի՞նչ էր դիւցազնապատումը: Առեղի դէպք մըն էր ան: Երկու հերոսներու մասին էր, որոնք՝ երկուքն ալ ցիղապետեր՝ արեւի ծագումէն մինչեւ մայրամուտը այդ բլուրին վրայ մենամարտած էին և՛ իբրեւ վախճան՝ երկուքն ալ մահուամբ ինկած: Թաղորին համար ցաւոտ էր այս պատմութիւնը: Անշուշտ անոր մէջ կը տեսնուէր

քաջութիւն և տոկալու կարողութիւն, բայց անոր միայն ահալիութեան շեշտը զարկաւ Թաղորի մօքին: Խորհեցաւ այդ եղբայրատեսակ արիւնհեղութեան վրայ, եւ դարձաւ զիտելու որ բլուրին վրայ ոչ մէկ հեաք մնացած էր անկէ: Բնութիւնը սրբած էր ամէն ինչ: Եւ իր տպաւորութիւնը խտացուց հետեւեալ երկու առդերուն մէջ, որոնք որքան դեղեցիկ իրենց արտայայտութեան ձեւին մէջ նոյնքան եւ խորունկ են նշանակութիւնով.

«Անոնք տաեցին, կուռեցան, ու մեռցուցին զիրար.

Բայց Աստուած՝ ամօթի մէջ՝ անոնց արիւնը ծածկեց գեղեցիկ կանաճչութիւնով մը:»

Այ՛ո, Աստուած ամօթ կ'ըզգայ՝ տեսնելով իր դաւակնորուն զիրար տեսնելու ու մեռցնելը, եւ անոնց վատ կեանքի արատները կ'անհետացնէ իր շնորհներուն առատութիւնովը: Թաղոր ուրիշ տեղ մը ըսած է.

«Ճշմարտութեան ճամբան հերոսներով է:

Վատարիները հոն չեն կրնար քալել:»
Ժըմեռ Բ. Մ. ԵՂԻԱՅԱՆ

(Շարունակելի)

ՅԻՍՈՒՍ Է ՄԻԱՅՆ

Երբ մութ ամպեր իմ վերեւ գոռ գոռան,
Շանթ ու կայծակներով հրածորան,
Մի անամպ երկինք կայ հոգիիս առկ,
Զի Յիսուս է լոկ Արեւըս համակ:

Երբ անթիւ վիշտերս մեծ ու պզտիկ,
Կ'ուզան ընել իմ սիրտս բըզիկ բըզիկ,
Մի խաղաղութիւն կայ հոգւոյս վրան,
Զի Յիսուս է միշտ ինձ յոյսի խորան:

Երբ մեղքի անել ճամբուն մէջ մօլար,
Որդի անպառակ, քալեմ վեր ի վար:

Շընորհքըն՝ Տէրոջ մեղքէս աւելի,
Յիսուս է միայն Փրկիչ սիրելի:

Երբ լքուած եմ գերթ ջախջախուած քընար,
Խոցաւեր սրտիս՝ հոգւոյս չիք հընար,
Այլ սպեղանի չեմ ուզեր երբեք,
Ոհ Յիսուս միայն կը բուժէ իմ վէրք:

Երբ այս կեանքիս խոր ծովն կը փոթորկի,
Ու գոռ ալեաց մէջ նաւակըս շրջի,
Չունիմ աղաղակ մը ահու լացի,
Քանզի Փրկիչս է միայն մօտ ինծի:

Երբ ա՛լ զառամած ծերուկ մ'ալիհեր,
Ցնդած մտքովս չունենամ վառ խոհեր,
Թէ այլոց աչքին սեպուիմ մի յիմար,
Յիսուս է ինծի բարեկամ մ'յարմար:

Երբ ա՛լ կը կանչուիմ աչքերըս փակել,
Իմ չունչըս՝ վերջին պիտ' ըլլայ երգել:
«Իմ փըրկուած հոգիս ընդունէ, ո՛վ Տէր,
Դու ես Յիսուս, իմ հաւատք, յոյս և սէր»:
Քիսապ—Քhorfjuնե Ա. Կ. ՊէրՊէրեԱն

ՀԱՄԱՐՈՒ ՆՕՔԵՐ

ԱՅՑ ՄԸ Ի ՂԱԶԻՐ

Ղազիր մամլթէյնէն մօտ մէկ ժամ
հեռու գրեթէ արգիտական ոճով շինուած
տուներով բաւական ընդարձակ գիւղ
մըն է. ունի մաքուր և առողջարար օդ,
առատ ջուր, ժողովուրդը ամբողջու-
թեամբ կաթոլիկ է:

Հոս ալ կայ Հայերու փոքրիկ գա-
ղութ մը, մօտ 30 ընտանիքներէ բաղ-
կացեալ՝ օրուն 6ը Աւետ. 4ը Կաթ. և
մնացեալը Առաք. են: Ունին եկեղե-
ցի և դպրոց, հոգեւոր հովիւը եղած է
Տէր Մեսրոպ քահանայ Էլմաճեան, որ
սիրուած է ամենէն:

Հ. Բ. Ը. Միութիւնը ամէն տարի
նպաստի կարեւոր գումար մը զրկած է
այս դպրոցին. բայց այս տարի զրամա-
կան որեւէ առաքում չէ ըրած ցարգ,

սիրող տնտեսական տաղնապին պատ-
ճառաւ: Կոյրերու ապաստանարանի
տնօրէնը՝ Պրն. Վիլլըր, նիւթապէս կ'օգ-
նէ այս դպրոցին և չքաւոր Հայ ընտա-
նիքներուն. անոր հանդէպ սեղանին
Հայերը յարգանք և երախտագիտական
զգացում կը տածեն իրենց սրտին
մէջ:

Այս տարի դպրոցը բացած են առանց
դրամի, աշակերտներու թիւը մանկա-
պարտէզով միասին 45 է, կը կառա-
վարուի մէկ ուսուցիչով և մէկ ուսուց-
չուհիով. ուսուցիչն է Պրն. Արմենակ
Գրաճեան, ազնիւ և համակրելի երիտա-
սարդ մը: Կ'արժէ որ կրթասէր և բա-
րեսէր տղայիներն օգնեն այս գաղու-
թին: Նիւթականի չգոյութեան պատ-
ճառաւ յիտ այսու Տէր Հօր՝ Մեսրոպ
քահանայ Էլմաճեանի՝ պարբերական
այցելութիւնը միայն պիտի վայելին:

Հոս կայ նաև Հ. Բ. Ը. Միութեան

Մ. ճիւղ մը: Ծնորհիւ Տէր Հօր և Միութեան նախկին երեք անդամներու ջանքերուն, անդամներու թիւը բարձրացած է 40-ի, որոնք, ցարկ կանոնաւոր կերպով վճարած են իրենց լուծանքը:

Կոյրերու ապաստանարանը: Եօթը տարիէ ի վեր այս հաստատութեան մէջ կը խնամուին խաչուած ցեղիս ամենէն զրթաւոր զաւակները, ափսո՛ս, Հայ Ժողովուրդին կողմէ ի սպառ մոռցուած: Ասոնք սակայն, կը հետաքրքրուին իրենց ցեղակիցներով, մասնաւորապէս Պէյրութի հիւղաւանանակ Հայերով և ցաւ կ'զգան անոնց բնակարաններուն փրկցուելուն համար:

Ամենէն զժրագոյններ կոչեցի՝ յաւիտենապէս խաչ կրելու համար կարծես ըստեղծուած ցեղիս այս վերապրող զաւակները. միթէ կա՞յ աւելի մեծ զրթաւոր դուրս լինելու մը քան զրկուելէ յետոյ ծնողներէ, զրկուել նաեւ կենսապարզ և արեւ լոյսէն, Աստուծոյ հիասքանչ ձեռակերտին՝ բնութեան պեղեցկութիւնը վախելիէ: Կոյրը ինքը միայն կը հասկնայ կոյր քառիկ անքողջ խնամք ու իր կենսիկն դառնութիւնը: Ի՞նչ վսեմութիւն ու քաղան զործ է օգնել այդ զժրագոյններուն և մեղմացնել անոնց վիշտն ու ցաւը. ու այս որբազան զործը ստանձնած է Զուրիգերիոյ «Հայոց Բարեկամներ»-ու միութիւնը:

Հայ մամուլն ալ չ'է հետաքրքրուած իր տեսակին մէջ եղական և զուտ բարեսիրական այս հաստատութիւնով, զոր սրտի ցաւով կը յիշատակուի հոս:

1922ին Մերձ. Արեւելքի նպաստամատոյց Ընկերութեան թուրքիայէն Սուրիա փոխադրած 10000 որբ—որբուհիներու մէջ գնաւորող երկսեռ 100 կոյրեր տարի մը Մամլթէյն մնալէ յետոյ կը փոխադրուին Ղազիր: Ապա նպաստամատոյցի Ղազիրի որբանոցներուն Տնօրէն Պրն. Քիւնձէլէրի միջնորդութեամբ «Հայոց Բարեկամներ» կը հետա-

քրքրուին մեր այս զժրագոյն բեկորներով:

1925ին Պրն. Վըշլըրի Եւրոպա ուղևորութեան ընթացքին իր և ուրիշ հայասէր Զուրիգերացիներու ջանքերով Զուրիգերիոյ մէջ կը կազմուի յանձնախումբ մը, ընկերակցութեամբ «Հայոց Բարեկամներու Դաշնակցութեան»:

1926—928 կոյրերու հոգածութեան զործը կ'ստանձնէ նպաստամատոյցը՝ օժանդակութեամբ գուրիցերական յանձնախումբին: Նպաստամատոյցի օրով երկու մանչ և երկու աղջիկ կը զրկուին Պաղեստինի Գերմանական Ծնէլլըր մեծ որբանոցը, հոն աթոռ, կոշով և այլ բաներ հիւսելը սորվելու համար, և սորվելէ յետոյ կը վերադառնան Ղազիր:

1928 Ապրիլ 11էն սկսեալ գուրիցերական յանձնախումբը ինքը կ'ստանձնէ ամբողջ զործը և պատասխանատուութիւնը, իբրեւ միսիոնարական պարտականութիւն:

Սլժմ հաստատութիւնը ունի երկու բաժին—արհեստանոց և դպրոց, ուր կան 100 երկսեռ կոյրեր, որ կը բնակին առանցիկ շէնքերու մէջ: Ասոնց մեծագոյն մասը դպրոցական տարիքին անցուցած ըլլալուն համար արհեստանոց կը յաճախեն, ուր կը պատրաստուին կարպետներ, հագիրանք ազոտոր աթոռներ, կոշովներ, սեղանի զարդեր և այլն. մօտ 40 հոգի դրեթէ ինքնապահ են. դպրոցականները մինչև կէսօր զանազան նախնական գիտելիքներէ զատ արարելէն խօսակցութեան, նուագի եւ երաժշտութեան դասեր կ'տունեն, իսկ կէսօրէ ետքը այլ և այլ բաներ կը սորվին:

Կոյրի մը տարեկան ծախքն է 110 սուր. ոսկի, իւրաքանչիւրը ունի հողատար մը որ կը հոգայ ծախքին մէկ մասը, ոմանք ամբողջութեամբ: Ամէն հողատար տարին 5 6 նամակ կը զրկէ իր հողատարեալին և փոխադրածաբար. ամէն տարի ծնունդին գեղեցիկ նուէրներ կը զրկեն, մինչև 50 ս. ոսկի արժողու-

թեամբ: Կարդացի հոգատարներէն մէկէն եկած նամակ մը, որմէ համակ սէր եւ գուրգուրանքի քաղցր զգացումներ կը բուրէին:

Ի՞նչ ուրախալի եւ սրտապնդիչ պարագայ մ'է տեսնել, որ մարդիկ Յիսուսի սիրով լիցուած կ'օգնեն մեր այս զբոսախառններուն եւ կ'աշխատին մեղմացնել անոնց վիշտը: Փառք կ'ուտանք Աստուծոյ, որ մեր կարծածէն շատ աւելի մեծ թիւով Եւրոպացիներ ո'չ թէ միայն տակաւին չեն ծնրադրած Բաաղին ուռջիւ, այլ անձնուրարար կ'աշխատին համաշխարհային պատերազմին յառաջ երած չարիքը դարմանել:

Դո՛ւն ալ Հայ ժողովո՛ւրդ, զո՛ւն ալ գոնէ միսիթարական խօսք մը, բառ մը խօսէ՛ հուրին ու թուրին զոհաւթած վաւակներուդ այս վերապրող հոգեհատորներուն:

Առողջական վիճակներն շատ լաւ է. երկու այցելու բժիշիկ եւ վկայեալ առամնաբոյժ մը պէտք եղած խնամքը կը տանին. հիւանդութիւնը հազուադէպ է: Այստեղիները սակայն, բոլորովին կը տարբերին քաղաքի կոյրերէն, թէև տխրութեան ժամեր կ'ունենան, բայց ընդհանրապէս ուրախ են եւ զուարթ: Հոս չենք լսեր թրքերէն... Լեզուն ոչ ալ քիւրճիկնէր, որ մեծ հաճոյքով կը յիշատակեմ. այլ հոգեւոր հոգեչունչ եւ հայերէն ժողովուրդական գեղեցիկ երգեր:

Հաստատութեան սիրուած պաշտօնեաներէն Տիար Ս. Զաւէնեանի ջանքերով տղաներէ բաղկացեալ նուագախումբ մը եւ երգիչ խառն խումբ մը կազմուած է, որ այցելուներուն հիացում եւ վարմանք կ'առթեն:

Տղաները ամէն իրիկուն կը նուագեն. իսկ աղջիկները կ'երգեն, իրենց ցանու վիշտը վանելէ վատ, օրուան աշխատանքէն վաւաստակարեկ շինականներուն ուրախ ու հաճելի ժամանց մը շնորհելու համար զոգցես:

Հաստատութեան պաշտօնէութեան թիւն է 28, որուն 25ը Հայեր են: Աղջկանց նախկին վերականգն Օր. Ե. Կիրակոսեան, որ սիրուած էր ամէնէն եւ զնահատուած Տնօրէնութեան կողմէ, Յուլիսին հրաժարած է իր պաշտօնէն, Աթէնք՝ քրոջը քով երթալու համար: Տեղը Պէյրութէն հրաւիրուած է Կարնեցի աղնիւ եւ շնորհալի հայուհի մը, Օր. Նոյեմյար, որ իր առաջին օրն իսկ աղջկանց սէրն ու համակրանքը շահած է:

Վերջացնելէ առաջ պարտք կ'զգամ խորին շնորհակալութիւններս յայտնել Տիարք Վիլլերին, Ա. Զաւէնեանին եւ Գրաճեանին, իրենց քով գտած սիրալիր ընդունելութիւններուս համար:

ԵՐՈՒԱՆԴ Լ. ԱՂԷԿԵԱՆ

ԸՆԹԵՐՑՈՂԻ ՍԻՆԱԿԸ

ԿՐԾՆԱԿԱՆ ՀԱՆՈՒՄՆԵՐԸ

Տէր խմբագիր,

Դառն կսկիծով կարդացի թերթիգ խմբակրականը՝ զոր ահազանգն էր, որ ոչ ժամանակէ մը իվեր մութին մէջ քողարկուած, կարգ մը անձերու կողմէն այլ եւ այլ պարագաներու տակ զեկավարուած ամօթալի դործունէութեան: Մեր այդ յարգելի ազգակիցները գաղափարով, խորհուրդով եւ գործով 70 տարի առաջուայ կոյր մտայնութիւնը կը ներկայացնեն դժբախտաբար: Որքան նեղ է այսպիսիներուն ըմբռնումի եւ տեսութեան հորիզոնը: Ազգութեամբ, կրօնքով, աշխարհագրական դիրքով, ընկերային կեանքով իրարմէ բոլորովին տարբեր մարդկային հատուածներ՝ համագործակցութեան, համերաշխութեան ու խաղաղութեան սիրոյն՝ ամէն միջոց ու զոհողութիւն յանձն կառնեն, իրարու կը մօտենան, կ'ողջագուրուին, որպէսզի անցեալին մէջ գործուած անքա-

ւելի սխալներու բացած վերքերու դարման մը գտնեն: Մինչդեռ տեղեկոյս մէջ խումբ մը անհատներ կը յանդպին երկպառակութեան, ատելութեան, քէն ու վրէժի որոմներ ցանկ: Ռ՛ւր ես ազատամտութիւն, ո՛ւր ես ազատ դատողութիւն: Տարրական քաղաքավարութիւնը կը պահանջէ, որ մարդ իր եղբոր կամ ընկերոջ ազատ համոզումներն ու զգացումները յարգէ: Ահա, ա՛յս է դուրսն ոգին: Հաւատաքննութեան շնորհանը շատոնց անցած է, սահմանադրական օրէնքով է որ կը կառավարուինք. ամէն մարդու անհատական համոզումները՝ իրեն համար սուրբ են և նմանական: Ունէ դիրքի և աստիճանի տէր անհատ հակամարդկային արարքի մը մէջ գտնուած կ'ըլլայ՝ երբ կը համարձակի նախատեսելու, այսպէսով իր եղբայրը զոր իրմէ տարբեր կը մտածէ և կը խորհի: Այսպէս չե՞ն խորհիր այս անախորժ դէպքերուն հեղինակներն ու դերակատարները:

Զերդ

ԱԶԱՏԱՌՆԻ

ԿԵԱՆՔԻ ՇՈՂԵՐ

ՎԵՑ ՓԷՆՆԻՆՈՅ ՀՐԱՇՔ ՄԸ

Պատիկ աղջիկ մը օր մը դեղարան մը մտաւ և վեց փէնիկոյ (15 դրոշ սուրի) հրաշք մը ուզեց: Դեղագործին օգրաւ կանը աղջիկին հարցուց թէ ի՞նչ ըսի՞ կ'ուզէր: աղջիկը սկսաւ պատմել թէ իր պղտիկ եղբայրը շատ հիւանդ էր, և թէ բժիշկը ըսած էր որ հրաշք մը միայն կրնար դաշն փրկել: Հետեւեալս իր դրամի տուփէն վեց փէնիկոյ մը առած էր (որ իրեն համար մեծ գումար մ'էր և իր մեծագոյն զոհողութիւնը յանձն առած էր), որպէսզի եղբայրը փրկուի: Այս պատճառաւ հոս եկած էր, ուր կը խորհէր թէ մարդերը աղէկ-

ցնող բաները կը ծախուին: Դեղարանին մէջ միջին տարիքով մարդ մը ուզեց աղջիկէն որ զինքը իր եղբորը քով տաջնորդէ: Տունը հասնելով բժիշկը հոն գտաւ, որ յայտնեց թէ շատ դժուար գործողութիւն մը կրնար առողջանալու առիթ մը տալ: «Գործողութիւնը ես կ'ուզեմ կատարել» ըսաւ միւսը հանդարտօրէն: Եւ կատարեց կատարեալ յաջողութեամբ: Անիկա մեծ վիրաբոյժ Սըր Ֆրէտէրիք Թրէվէս էր:

ՆՈՐ ՕՐՈՒՍՆ ԱՐՇԱՆՈՅԱԸ

Ծեր ճրագաւոյցի մը պարտականութեան մէկ մասն էր նաեւ արշաւոյսէն մէկ ժամառաջ փողոցի ճրագները մարել: Օր մը իրեն մէկը ընկերացաւ, որ վերջին ճրագը մարելէն առաջ իրեն դառնալով ըսաւ. «Այս ճրագը քու կեանքիդ կը նմանի, վայրկեան մը լոյսի մէջ բայց վերջը մութի մէջ: Մահէն վերջը բան մը չկայ, բացի խաւարէ:» «Կըսը խալիք,» ըսաւ ճրագաւոյցը, «մութէն վերջը նոր օրուան մը արշաւոյսը կը ծագի:» Երջանիկ է այն մարդը, որ ծեր ճրագաւոյցի նման կրնայ հանդերձեալին, մեծ Անդենականին, նայիլ անխախտ հաւատքով:

ԻԽԵՆ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆ

Բարեկամ մը նշանաւոր Անգլիացի փիլիսոփայ գրագէտ Ճան Բըսթինի թանկագին թաշկինակ մը ցուցուց, որ մեղանի բիծերով արտատաւարուած էր: «Ոչ մէկ բանի ա՛յլ չի ծառայեր ան, բացարձակապէս անարժէք է» ըսաւ անոր տէրը: Բըսթին չպաճախասանեց, բայց թաշկինակը իրեն հետ միասին տարաւ: Ատեն մը ետքը վանիկա իր տէրոջ՝ ետ դրկեց, որ հազի՛կ կ'իցաւ ճանչնալ իր թաշկինակը: Բըսթին շատ ճարտարութեամբ և գեղարուեստականօրէն չինական մեղանով թաշկինակին վրայ պատկերեցած էր,

անոր վրայի բիծը իբր կորիզ գործածելով, թաշկինակը նախկին վիճակէ շատ աւելի թանկագին եղած էր: Արատաւորուած կեանք մը անպատճառ անարժէք կեանք մը չէ. Յիսուս կրնայ գեղեցկացնել զայն:

«ՈՒՐԻՇՆԵՐ»

Փրկութեան Բանակի հանգուցեալ հիմնադիր Զօրավար Պուժ հ'ուզէր իբր իր տարեկան պատգամը ներշնչող և հրամայող խօսք մը զրկել աշխարհի վրայ ցրուած Բանակի պետերուն: Հեռագրական մեծ ծախքին պատճառաւ աշխատեցաւ մէկ բառով բայց կատարեալ կերպով արտայայտել զայն: Երկար մտածելէն ետքը աշխարհին ամէն կողմը հեռագրեց. «Ուրիշները»: Որչա՛փ բան խտացեալ է այդ բառին մէջ:

ԼՈՒՐԵՐՈՒ ԲԱԺԻՆ

ՏՈԳԹ. Ա. ԱԼԹՈՒՆԵԱՆԻ բժշկական ասպարէզը մտնելուն յիսնամեայ յորեկեանական շքեղ հանդէսը կատարուեցաւ, Նոյ. 26 ի գիշերը, Հալէպ, Ազիզիյէի Հայ Աւետ. Եկեղեցիին սրահը, Աւետարանական համայնքին նախաձեռնութեամբ, և մասնակցութեամբ Հալէպի բժշկական դասուն, բոլոր ցեղերուն և կրօնական համայնքներուն, ինչպէս նաեւ Ֆրանսական և Արաբական իշխանութեանց ներկայացուցիչներուն: Ընտրեալ բազմութիւն մը մեծ հետաքրքրութեամբ հետեւեցաւ ժամը 9 էն մինչեւ 11. 45, հայերէն, ֆրանսերէն, անգլիերէն, արաբերէն և թուրքերէն ուղերձներուն, և Օր. Ա. Մանուկեանի ղեկավարութեամբ երգեցիկ խումբի երգեցողութեանց: Հանդէսին ատենապետեց Վեր. Կ. Յարութիւնեան, և նախագահեց Տ. Արտաւազդեպոս. Սիւրմէնեան փոխանորդելով Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Ս. Սրբազան Խապահա-

նի, Վհհ. Կաթողիկոս Կիլիկիոյ: Մամբամանութիւնք յաջորդել:

ՏԻՍՐ ԳՈՒՈՒՍՏ ԿԻԻԼՊԷՆԿԵԱՆ, ազնուաթրտ մեծահարուստ Լոնտոնաբնակ հայը, ընդունած է Հ. Բ. Ը. Մ. ի նախագահութիւնը, և պաշտօնին ձեռնարկած է: Եւ իբր առաջին գործը ազնուութիւնը կ'ունենայ Կեսարիոյ որբերէն 25 նոց երրորդ խումբի մ'ես պատըն պարումին համար տրամադրել տարեկան 600 անգլ. ոսկի: Ասկէ քիչ առաջ 7000 անգլ. ոսկի նուիրած էր Երուսաղեմի մէջ Դուրեան Մատենադարանի մը շինութեան համար:

ՆԻԿՈՍԻՈՅ Ս. Աստուածածին եկեղեցին, որ թանկագին հնութիւն մը կը նկատուի, նորոգուած է 300 ոսկի ծախքով, որ գոյացած է ժողովրդային հանգանակութեամբ:

ՍԵԼԱՆԻԿԷՆ մեկի գրուած Նոյ. 20 թուակիր նամակով մը կը յայտնուի թէ.

Պատ. Կ. Ֆարաճեան և կենակիցը Տիկ. Հայկուհի Ֆարաճեան, որոնց երկուքն ալ Սիւռ լալ Րիլիճընէ ուսումնաւարտներն են, եռանդով կ'աշխատին իրենց նոր դաշտին մէջ: Տիկ. Հ. Ֆարաճեան կ'աշխատի իր նոր կազմած Մանկանց Կիրակնօրեայ Դպրոցին մէջ: Նորակազմ երկուսն է. Ք. Ջանից ընկերակցութիւնը կ'ունենայ իր կանոնաւոր ժողովները և մօտ օրէն մտադիր է նաեւ ժողովրդային լսարան մը բանալու: Կազմուած է նաեւ Կանանց Օժանդակ Ընկերակցութիւնը: Ժողովուրդին մէջ նոր եռանդ մը սկսած է ծայր տալ, պաշտամունքին՝ ներկաներութիւնը աւելցած է: Նոր վիճակագրութեան համեմատ մօտաւորապէս 100 բնտանիքներ արձանագրուած են մինչեւ այսօր:

ԵԻՐՈՊԱՅԻ ԹԵՄԸ կազմակերպելու համար զրկուած Տ. Թորգոմ Արք. Գու-

շակեանի պատրաստած տեղեկագրին համաձայն Եւրոպայի Հայութեան թիւն է 68,000-դուրս ձգելով Ռուսիան, Յունաստանը, Պուլկարիան, և Բուլմանիան: Այս թիւին մօտ 64 հազարը Ֆրանսայի մէջ, 1300 ը Պելճիա, 1000 ը Անգլիա և մնացածը միւս երկիրներ կը գտնուին:

«ՓԱՐՈՍ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ» առնուն ընկերութիւն մը կազմուած է Սելանիկի Հայ երիտասարդներուն կողմէ:

ՀԱՅ ԹՈՒԲԱԽՏԱԻՈՐՆԵՐՈՒ մասնաւոր դարմանատուն մը պիտի կառուցուի Աթէնքի մօտ. Պր. Տէրվիք, Դանիական Հայանպաստ Յանձնախումբին անդամներէն, Հելլէն առողջապահական Փոխնախարարին յայտնած է թէ այս նպատակաւ 2500 տղար հանգանակուած է. փոխ. նախարարը հաւանութիւն յայտնած է գետին մը տրամադրելու:

ՃԱՎԱՅԻ ՀԱՅԵՐՈՒՆ թիւն է 600 որոնք ունին երկու եկեղեցի և երկու հովիւ:

ՎԵՐ. Մ. ՓԱՓԱՋԵԱՆ Ամերիկեան Պորտի տարեկան ժողովին մէջ խօսած է Մերձաւոր Արեւելքի մասին:

ՆԱԽԿԻՆ. Կ. Թ. ԳՈՂԷՃԻ առաջին վրկայաբաշխութեան Յունիսի մէջ կատարուած յիսնամեայ յորեկեանի հանգիստութեանց մասին Հալէպ Գողէճի տըպարանէն հրատարակուած է անգլիերէն գրքոյկ մը, որ ի մէջ այլոց, կը պարունակէ Վեր. Մ. Կ. Փափագեանի հոյակապ ճառը և փրոֆ. Զ. Պէզճեանի իմաստաւոր և թելադրիչ ուղերձը: Փափաքողներ կրնան նախադահութեան գիմել:

ՏՐ. ՃԷՅՄՍ ՊԱՐԹԸՆ Նոյ. 16 ի Կիրակի օրը առաւօտուն խօսած է Ալիզիլէի Հայ Աւետ. Եկեղեցիին մէջ կիրակնօրեայ դասէն վերջ: Քաջալերական

խօսքերով շնորհաւորած է Հայերը իրենց ներկայ բարւոքեալ վիճակին համար, բայց խրատած է զգուշանալ հակառակութիւններէ և բաժանումներէ, որոնք Հայութեան համար անէժք մը եղած են: Յանձնարարած է նաև պատասխանատուութեան և ծառայութեան պիտակցութիւն ունենալ ոչ-քրիստոնեայ աշխարհի հանդէպ:

ՀԱՅ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆԸ Ամերիկայի համալսարաններէն մինչեւ հիմա ունեցած է 16 չրջանաւարտներ. ներկայիս ունի 25 ուսանողներ Ամերիկայի զանազան համալսարաններուն եւ գոլէճներուն մէջ: Ասոնցմէ զատ Ֆրանսայի 12 ուսանողներուն օգնած է: Այս սաները միայն երկրագործական ուսուցմի չեն հետեւիր այլ նաեւ ուրիշ կարգ մը գործնական գիտութեանց:

ՎԱԼԱՆՍԻ ՄԷՋ Պալաքեան Եպս. ի նախագահութեամբ յանձնախումբ մը կազմուած է եկեղեցի եւ դպրոց շինելու համար. այս նպատակաւ 10,000 ֆլորանգ հանգանակնուած է:

ՍԷՎՐԻ ՄՈՒՐԱՏԵԱՆ Վարժարանը այս տարի ունեցած է 58 գիշերօթիկ աշակերտներ, քանի մը ցերեկօթիկներէ զատ:

ՊԱՍՐԱՅԻ Հայոց թիւն է 1159, մեծ մասամբ գաղթականներ, որոնց տնտեսականը գոհացուցիչ է:

ԿՐԷՏԷԻ ՄԷՋ 1000 հայեր կան, երեք հայ յարանուանութիւններ ալ ունեցած են եկեղեցական կազմակերպութիւններ:

ԼԻՈՆԻ (Ֆրանսա) Հայ Աւետ. Եկեղեցիի հովիւ Պատ. Ետուիֆ Պարսումեան և իր կինը իրենց ամուսնութեան արծաթեայ յորեկեանը տօնած են՝ ընտանեկան մտերմիկ շրջանակին մէջ:

ԱԼԵՔՍԱՆԴՐԵԹԷՆ Պատ. Կ. Գլխա-
նախարարն կը գրէ Նոյ. 26 թուակիր նա-
մակովը.

Այս ամսու միջոցին Մր. Հ. Հ. Րիկզ
մեզ այցելեց: Կիրակի օրը Երբ. 6. 1 հա-
մարին վրայ եւ գիշերը Պուկ. 9. 25 հա-
մարին վրայ քարոզեց: Երկու անգամին
ալ մեծ բազմութիւն եկեղեցին լեցուցած
էր:

Դարձեալ այս ամսուան մէջ Պէյլանի
քարոզիչ Պատ. Յ. Կիւրլէքեան Կիրա-

կի օրացուն համար Ալեքսանտրէթ հրա-
ւիրուելով ես ալ Պէյլան գացի, խոսեցա-
մի Նոյ. Ի երբորդ Կիրակին Պէյլանի հետ
փոխանակած եղանք: Մեր այս շրջա-
նին չորս եկեղեցիները — Գլխապետան,
Պէյլան, Ալեքսանդրէթ եւ Ֆարսիսիս —
արեւելեան Կիրակի մը բեմերը փոխա-
նակելով ժողովուրդին նորութիւն մը եւ
թէ իրարու հետ մօտէն յարաբերութիւն
մը հաստատել կ'ուզենք:

ԲԱՑԱՌԻԿ ՊԱՏԵՆՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՅ ԴԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒՆ

(Կոչնակի Երեսնամեակին Առթիւ)

Հայ գաղթականներէն անոնք որ Կոչնակի կանոնաւոր բաժանորդա-
գիրն (5 տօլար) վճարելու անկարող են, պիտի կրնան, բացառաբար,
1931—1932-ի տարեշրջանին համար, նոր բաժանորդ արձանագրուիլ,—

ՏԱՐԵԿԱՆ \$3.00-Ի ՓՈԽԱՐԷՆ

Ասիկա կարելի եղած է, շնորհիւ ԲԱՐԵՍԷՐ ԱՆՁՆԱԻՈՐՈՒԹԵԱՆ
ՄԸ՝ որ Կոչնակի Երեսնամեակին առթիւ, մինչեւ \$500.00-ի գումար մը
տրամադրած է, պայմանաւ որ, նոյնչափ գոհողութիւն մ'ալ ձեռք յանձն
առնենք, որպէս զի Հայ գաղթականներէն, մինչեւ 500 հոգի, գիրութիւն
ունենան, Կոչնակ-ին նոր բաժանորդ արձանագրուելու ՄԻԱՅՆ ԵՐԵՔ
ՏՈՒԱՐՈՎ:

Այս պատեհութիւնը կը տրուի միայն հետեւեալ երկիրներու հայ կա-
րօս գաղթականներուն,— ՀԱՅԱՍՏԱՆ, ՍԻՒՐԻԱ, ՅՈՒՆԱՍՏԱՆ, ՊԱՆԴԱՆ-
ԵԱՆ ԱՌԻՒՇ ԵՐԿԻՐՆԵՐ, ՖՐԱՆՍԱ, ՊԱՆԵՍՏՈՆ, ԵՒ ԿԻՊՐՈՍ:

Ձեզիւն բաժանորդագիրն, 3 տօլար, պէտք է ղրկել կանխիկ:

Այս պատեհութիւնը պիտի տեւ 6 ամիս, մինչեւ 1931 Մարտ 31:

GOTCHAG PUB. CO. 331-Fourt Ave., New York, N. Y.

ԿԱՐԵՒՈՐ

Մեր բաժանորդներէն կը խնդրուի որ իրենց յետեալ պարտքեր վճարեն
սարին չլացած: Ազիզիէ եկեղեցիին, Հալէպ, յարգելի բաժանորդները հա-
նին իրենց վճարումները ընել Պր. Մանուէլ Պօզեանի:

صاحب متياز و مدير المسئول الاقنيس قمرهت هاروتونيان